

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

17.01.2016 թվականին կայացավ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի ընդհանուր ժողով մասնակցությամբ մարզպետարանի ներկայացուցիչ Ս. Սարխեկյանի և համայնքի 80 բնակիչների

Նախագահությամբ՝

Լ. Մանուկյանի

Քարտուղարությամբ՝

Վ. Հովհաննիսյանի

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ղեկավարի հաշվետու զեկույց, 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Զեկույցող՝ Կ. Ղորղանյան

ԼՍԵՑԻՆ - Համայնքի ղեկավարի հաշվետու զեկույցը, 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՏԱԼԶԱՅՏՎԵՑԻՆ - 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ զեկույցումով հանդես եկավ Կ. Ղորղանյանը:
Զեկույցման շուրջը իրենց մտքերը արտահայտեցին Էդիկ Մանուկյան, Նորիկ Ղաշտոյանը, Ռազմիկ Ղազարյանը:
Արտահայտվողները մատնանշեցին ջրագծերի, մշակույթի տան և մանկապարտեզի հիմնովին վերանորոգման հիմնահարցերը, այդ խնդիրներին հրատապ լուծում տալու անհրաժեշտությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հանձնարարել համայնքի ղեկավարին բարձրացրած խնդիրների վերաբերյալ բարձրաձայնել մարզպետարանում հիմնախնդիրներին, լուծում տալու համար:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԶ՝

Լ. Մանուկյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. Հովհաննիսյան

մրցանակային տեղ գրավողներին տրվել են նվերներ, իսկ գոհված ազատամարտիկների ընտանիքներին, որոնց թիվը 16-ն են՝ դրամական պարգևներ:

Մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի օրվան, որի ժամանակ ծաղիկներ են դրվել հուշարձանին:

Տարեվերջին Ամանորի կապակցությամբ կազմակերպվել է Նոր տարվա հանդես, որին մասնակցել են համայնքի շուրջ 135 անդամներ և հյուրեր:

Նոր տարվա նախաշեմին դպրոցական և նախադպրոցական 500 երեխաների տոնածառ հանդեսին տրվել են նվերներ:

Հետևել են գյուղի կենդանիների արոֆիլակտիկ միջոցառումների անթերի կատարմանը: Առավել կարեոր միջոցառումների անցկացմանը և կազմակերպմանը մասնակցել են նաև համայնքապետարանի աշխատակիցներ: Հատկապես արյան անալիզների համար խոշոր եղջերավոր կենդանիներից արյուն վերցնելու աշխատանքներին մասնակցել և օգնել են համայնքապետարանի աշխատակիցները:

Քաղաքացիների ընդունելությունները կատարում են ամեն օր, սահմանված կարգով ուշադրությամբ լսում ամենքին, քննարկում առաջ քաշած հարցերը և առաջարկությունները ընդունում դիմումները և բողոքները, օրենքի սահմաններում ձեռնարկում են միջոցներ հարցերին լուծում տալու համար:

Ֆինանսների բնագավառում կատարել են հետևյալ աշխատանքները

Հաշվետու ժամանակահատվածում եռամսյա հաշվետվություններ են ներկայացրել համայնքի ավագանուն: Վերահսկել են համայնքի բյուջեյի միջոցների նպատակային օգտագործման գործընթացը:

2016 թվականի մարտի 17-21-ը տեղի ունեցած ցրտահարության հետևանքով համայնքի բնակիչները զրկվեցին իրենց հիմնական էկամոտի աղբյուր՝ ծիրանի բերքից: Այնուհետև մայիսի 18-ին տեղացած կարկտահարության հետևանքով մասնակի վնասվեց համայնքի ցանքատարածքները, ինչպես նաև սալորենու և դեղձենու այգիները: Դա էլ հանդիսացավ պատճառ, առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեյի թերի կատարման համար:

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել են հողի հարկի և գույքահարկի գանձման աշխատանքները: 2016 թ. ամբողջ տարվա ընթացքում մուտքագրվել է.

Հողի հարկ- պլան 8579.5 ՀՀ հազ. դրամ – կատ. 4799.9

Գույքահարկ –պլան 7150.0 ՀՀ հազ. դրամ – կատ. 7577.4

Վարձավճար – պլան 350.0 ՀՀ հազ. դրամ –կատ. 430.7

113 հարկային եկամուտներ պլան 250.0 հազ. ՀՀ դրամ – կատ. 0
Տեղական տուրք – պլան 340.0 հազ. ՀՀ դրամ - կատ. 10.0

Հասարակությանը վերբերող կարգապահական հարցերով համագործակցում եմ ուստիականության աշխատակիցների հետ:

Անձնագրային սեղանի պետի հետ մշտապես առկա է փոխադարձ տեղեկատվություն բնակիչների ներհոսքի, արտահոսքի, ժամանակավոր բացակայողների վերաբերյալ:

Պաշտպանության բնագավառում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

Աջակցել եմ գորակոչի կազմակերպման աշխատանքներին, ժամանակին ներկայացրել գորակոչիկների անկետային տվյալները, բնութագրերը, տեղեկանքները և այլ:

2016 թվականին ապրիլյան գերլարված օրերին կազմակերպել եմ նյութական աջակցություն և ուղարկել ԼՂՀ պաշտպաններին:

Մշտապես համագործակցում եմ գյուղի սահմանադահ ուղեկալի հետ:

Մայիսի 28-ին սահմանադահ գործերի օրվան նվիրված տոնակատարության համար նվերներ և դրամական օգնություն է տրվել ուղեկալի ողջ անձնակազմին:

2016 թվականի ընթացքում հետևել եմ համայնքի փողոցները լուսավորող անսարք լուսամփոփների վերանորոգմանը և երկու փողոցներում անցկացվել է գիշերային լուսավորություն:

Պարբերաբար կատարել եմ խմելաջրի մանրեագերծում քլորացման եղանակով կատարվում է կանոնավոր խմելաջրի մատակարարում, ձմռան ամիսներին՝ 2-3 ժամ, իսկ մնացած սեզոններին՝ 4-6 ժամ:

Պատշաճ մակարդակի է աղբաթափման աշխատանքները:

Հողօգտագործման բնագավառում հետևել եմ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Կատարվել է ներհամայնքային ճանապարհների, փողոցների վերանորոգում և ավազապատում, որոնք գտնվում էին անմխիթար վիճակում:

Համայնքում գործում է առողջապահական կենտրոն, ապահովված է բուժ տեխնիկայով, զագով, ջրով և էլեկտրական հոսանքով: Իրականացվել է տարբեր մասնագետների այց, որի ընթացքում սպասարկվել է համայնքի անդամներ:

Առողջապահական կենտրոնը գործում է որպես ընտանեկան, որտեղ իրականացվում են ընտանեկան բժշկություն:

Համայնքում գործում է «Վազգեն Սարգսյանի» անվան մանկապարտեզը ՀՈԱԿ-ը, որը գտնվում է համայնքապետարանի ենթակայության տակ, մշտապես տեղեկացված են եղև մանկապարտեզի խնդիրներին և տվել հրատապ լուծումներ:

Համայնքում գործում է «Յուրա Ղաշտոյանի» անվան միջնակարգ դպրոցը:

Սոցիալապես անապահով խավերի համար աշխատում եմ ամեն ինչ անել նրանց պայմանների բարելավման համար:

Ամփոփիչ խոսքով ուզում եմ ասել, որ իմ աշխատանքները նպատակամղված են Ջանֆիլի համայնքի բնակիչների ապրելակերպը բարեկեցիկ դարձնելուն, որը դանդաղ սակայն հաստատուն քայլերով իրականանում է:

Ջանֆիլի համայնքի ղեկավար՝



Կամսար Ղորղանյան